


կամ նահապետակոն կրօնքը, առանց հարկ համարելու բացատրել զայս, որովհետև ամեն հին ժողովրդոց մէջ այլ նոյն և նման է աստուածպաշտութիւնն, քանի որ թիւրութիւն չէ մտած միջերնին. իսկ երբ խտորին՝ իրարմէ այլ հեռանան հաւատով և պաշտամամբք: և այն ատեն հարկ կ'ըլլայ առանձնակի քննել խօսիլ իւրբարանչիւր ազգի վրայ:

Չայո չի սկսած՝ յիշեմք Կրօնից և Հաւատոց իմաստի նման կամ մերձաւոր անուն մ'այլ ի լեզուս, որ է Դաւանանք. այս այլ յոգնակի, թէ և զաւանութիւն այլ կ'ըլլուի. իմաստն յայտնէ աստիճանաբար ծագումն կամ հետեւանք ի Հաւատոց, որպէս նա ի Կրօնից. սա առաջին զգացումն՝ կիրքն էր, այնոր մասաւոր կերպաւորութիւնն և ներկայումն՝ Հաւատքն, իսկ այսոր բացատրութիւնն բանիւ՝ Դաւանանքն: Չեմք ուզեր բառիս քերականօրէն այլեայլ ի մաստնեբը քննել, կամ աւելի քրիստոնէական կրօնից մէջ գործածուիլը. ինչպէս այլ ըլլայ՝ մեզի շատ հին կ'երեւի այս բառս այլ, և վերջի մասը թողլով՝ առաջինն կարծել կու տայ Հընդկաց և Արեւաց Տեառս, տեսադաս բառից զուգորդութիւն, ինչպէս գուցէ և դէս և դից ազգակցութիւնն: Թողլով և զայս զիտնագունից քննութեան, հարեւանցի յիշեմք և ի Պարսկականէն առ մեզ մտած Դեմ (Թ. Տին) և Քէշ կամ Կեշտ կրօնանիշ բառերն այլ, իրենց թողլով իրենց իմացածը: — Յիշեմք նոյնպէս և զԱ-

զանց, որ՝ սովորականէ դուրս և մոլար դաւանանք և վարդապետութիւն նշանակէ, թէ հեթանոսական թէ քրիստոնէական կրօնից մէջ բայց գուցէ ի սկզբան ուղիղ կամ ընդունուած հաւատքն այլ նշանակէր, եթէ բառին առաջին և զլիւար մասն՝ Աղ՝ համարիմք նոյնասկիզբն Աղօքք, Աղերս, Աղալանք, այլ և Աղու, Աղանի, և այլն, բառից, որբ ամենն այլ անոյշ իմաստ մի ընծայեն: — Յիշեմք յետ այսոցիկ և Պաշտօն բառը, որ ըստ իմաստին՝ կու գայ յետ Հաւատոց, որոյ մտաւոր արտայայտութիւնն է Դաւանանքն, զգալին և նիւթականն՝ Պաշտօնն. որոյ վրայ հարկ կ'ըլլայ խօսիլ յետ իւրբարանչիւր հաւատոց բացատրութեան. իսկ ծագումն բառին՝ ի բարդութիւնս մտեալ՝ առանձին Պաշտ չի գտուիլ, թուի ի Պարսից մտեալ կամ հասարակ Հայոյն և նոցա. գուցէ անոնց Պիհէշտ բառն՝ որ արքայութեան պէս բան մի նշանակէ. յորմէ և Արտիպիհէշտ՝ հրեշտակապետի անուն, իրիւս վեհագոյն: Գուցէ նկատելու արժանի համարուի և բառին ի մեր լեզուս Պա վանկով՝ յարդելի իմաստ տուող բառից կազմութիւնն. ինչպէս Պատարագ, Պատարածակ Պատիշ, Պաշտաւանք, Պագանեշ, Պատշաճ, և այլն: Այս երկբայական և ոչ շատ կարեւոր բառից քննութիւնները յանձնելով երկայնամտաց՝ անցնիւք առ ամենէն կարեւորն որ է Աստուած:

Շարայարեյի

ՎԱՐՈՒ ԵՐ ԵՄՐԻՍ



Ըսաւ շիրիմն վարդնմ.
 — Այժ արտասուք՝ զորս ատաւօտ կաթէ բեզ,
 Ծարլիկ սիրոյ, իմն կ'ըմնս:
 Եւ վարդն ըսաւ առ շիրիմ.
 — Դու իմն կ'ըմնս՝ որ իմն զտրի սըրըմթաց
 Աժըմնիդ մէջ մըլտարաց:

Պատասխանեց վարդն.— Ո՛վ մըթիմ դամբարան,
 Ջայն արտասուք կ'ըմնեմ ի ստուեր սևաթոր
 Յամպար ծարղկամ և հոտ մեղրի թաղցրարտոր:
 Կըրկմեց շիրիմ անդէմ. — Ծարղիկդ ողբակամ,
 Այժ ամնմայ հոգի՝ առ իս որ հասնի՝
 Ջըլարթագեղ կ'ըմնեմ հրեշտակ մի երկմի:

ՉԻԿՏՈՐ ՀԻԿՊՈՑ

Ներքին ձայնք, — Տաղ ԼԱ,